Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ Սիսիանի թիվ 4 հիմնական դպրոց

Թեմա՝ **ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԴԱՍԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ**

Վերապատրաստող, մենթոր՝ Արմինե Մեծրիցյան

Ուսուցիչ՝ Թամար Նավասարդյան

Երևան 2023

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ……
2. ԴԱՍԸ ՈՐՊԵՍ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՁԵՎ……..…

1.1 Ի՞նչ է արդյունավետ դասը……..….

1.2 Դասի տիպերըև կառուցվածքը…….

1.3 Արդյունավետ հնարներ դասի խթանման, իմաստի ընկալման և կշռադատման փուլերի համար…….

2.ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԴԱՍԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ……

2.1 Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումն իբրև տարրական դասարաններում արդյունավետ դասերի պլանավորման միջոց…….

2.2 Արդյունավետ դասերի պլանավորման առանձնահատկությունները տարրական դասարաններում……

2.3 Ուսուցման արդյունավետ մեթոդների և հնարների կիրառումը տարրական դասարանների դասագործընթացում……..……

3. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ……

4. ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ…….

5. ՀԱՎԵԼՎԱԾ…….

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտական աշխատանքի արդիականությունը: Հասարակական կյանքի անբաժանելի մաս հանդիսացող կրթությունը բոլոր դարաշրջաններում ուղղված է եղել հասարակության պահանջների բավարարմանը: Կրթության նպատակը մանկավարժության մեջ միշտ եղել է անփոփոխ՝ աճող սերունդը նախապատրաստել կյանքին, ձևավորել տվյալ ժամանակաշրջանի համար հասարակության լիարժեք, ակտիվ անդամներ, իսկ կրթության խնդիրներն անընդհատ փոփոխվել են՝ պայմանավորված նոր հասարակական պահանջների ձևավորմամբ, տվյալ հասարակության տնտեսական, գիտական, մշակութային զարգացմամբ:

Արդյունավետ ուսուցում կազմակերպելու, կրթության նպատակներն իրականացնելու համար անհրաժեշտ են ուսուցման մեթոդներ, հնարներ և ձևեր: Մեթոդների ընտրությունը և կիրառությունն ինքնանպատակ լինել չի կարող: Այն կապված է բազմաթիվ խնդիրների և նպատակների հետ, որոնք իրական լուծում կարող են ստանալ միայն հատուկ պլանավորված և կազմակերպված ուսումնական գործընթացի միջոցով՝ արդյունավետ դասերի կազմակերպմամբ:

Հետազոտական աշխատանքի նպատակն է ուսումնասիրել տարրական դասարաններում արդյունավետ դասերի պլանավորման առանձնահատկությունները:

Հետազոտական աշխատանքի նպատակների ուսումնասիրությունից բխում են հետևյալ **խնդիրները՝**

- ուսումնասիրել արդյունավետ դասի տիպերն ու կառուցվածքը,
- վերլուծել տարրական դասարաններում արդյունավետ դասերի կիրառման ժամանակ տեղեկատվական տեխնոլոգիաների նշանակությունը,
- բացահայտել տարրական դասարաններում արդյունավետ դասերի պլանավորման առանձնահատկությունները, մեթոդներն ու հնարները:

մանակավարժներին՝ ուսուցման գործընթանցն ավելի արդյունավետ կազմակերպելու համար;

ԴԱՍԸ ՈՐՊԵՍ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՁԵՎ

1.1.Ի՞նչ է արդյունավետ դասը

«Միայն այն ուսուցիչն է իր գործում հմուտ, ով լավ գիտի, թե ինչ պետք է իմանան իր աշակերտները և ինչ ճանապարհով է պետք հասնել այդ գիտելիքներին»[1]*:*

Վ. ԱՍուխոմլինսկի

Դասը մանկավարժական գործընթացի բջիջն է: Այն միևնույն տարիքային խմբի համար կրթության կազմակերպման ձև է, ըստ որի սահմանվում է կոնկրետ օրակարգ և բոլորի համար մշակվում է միասնական կրթական ծրագիր: Մանկավարժության նշանակալի մասը խտանում է դասի մեջ: Այն սովորողների կրթության, զարգացման և դաստիարակության խնդիրների լուծման համար պարբերաբար կիրառվող գործընթաց է, որոշակի ժամանակահատվածում ուսուցիչների հաստատուն կազմի և սովորողների գործունեության կազմակերպման ձև[2]:

Դասավանդման ընթացքում հարկավոր է մեծ ուշադրություն դարձնել դասի պլանավորմանը, որը պետք է ոչ թե ձևական բնույթ կրի, այլ ուսուցչի համար ուղղորդող նշանակություն ունենա, որպեսզի դասապրոցեսը լինի արդյունավետ: Անհրաժեշտ է դասավանդելիս հաճախակի կիրառել համագործակցային մեթոդներ՝ չհրաժարվելով ավանդականից: Այդ մեթոդների նպատակային կիրառումն աշակերտների համար դասերը դարձնում են հետաքրքիր, արդյունավետ և նպաստում են նյութի հեշտ յուրացմանը: Մեթոդների կիրառումը պետք է լինի տեղին և նպատակային:

Արդյունավետ դասապրոցեսը պլանավորելիս և կազմակերպելիս կարելի է օգտվել ուսումնաօժանդակ ձեռնարկներում զետեղված նմուշ օրինակներից[3]:

Արդյունավետ դասը պլանավորելուց առաջ շատ կարևոր է, որ ուսուցիչն իր առջև դնի այս երեք հարցերը.

- ի՞նչ սովորեցնել,
- ինչպե՞ս սովորեցնել,
- ինչո՞ւ հենց այդպես և ոչ այլ կերպ սովորեցնել:

---

[1]ՍոխոմլինսկիՎ.,Սիրտս նվիրում եմ երեխներին,Եր., 1977,էջ 35:
[2]Դասի կառուցվածքային տարրերի կիրառումը հանրակրթական առարկաների օրվա պլանների կազմման գործընթացում,Եր., 2014, https://innostud.am/application/library/5ced296a.pdf, էջ 2:
[3]Կրթության, գիտությանննախարարություն, Տեղեկագիր, Եր., 2011, էջ 4:

Ի՞նչ սովորեցնել հարցի պատասխանը առարկայի ուսուցման բովանդակությունն է, որը որոշվում է պետության կողմից հաստատված ծրագրով և դասագրքերով, որոնք կազմված են ծրագրի հիման վրա:

Ինչպե՞ս սովորեցնել խնդիրը լուծելու համար անհրաժեշտ է դիտարկել մանկավարժության մեջ ընդունված ուսուցման ավանդական և ժամանակակից մեթոդները, եղանակները, հնարները և վարժությունների համակարգը:

Ինչո՞ւ հենց այդպես և ոչ այլ կերպ սովորեցնելը կարևորվում է, որովհետև ուսուցման գործընթացում յուրաքանչյուր մանկավարժ պետք է գիտակցորեն կատարի իր քայլերը՝ համոզված, որ ինքը ճիշտ ուղու վրա է:

Արդյունավետ դասի կազմակերպման ժամանակ ուսուցիչը պիտի գրավի աշակերտների ուշադրությունը, հետաքրքրությունը և ապահովի մասնակցությունը:

1.2. Դասի տիպերն ու կառուցվածքը

Դասի տիպը սահմանում է ուսուցիչը՝ ելնելով դասի նպատակներից և խնդիրներից:

- Նոր ուսումնական նյութի յուրացման դաս:
- Գիտելիքների, կարողությունների և հմտությունների կատարելագործման դաս (յուրացված նյութի նպատակային կիրառություն):
- Ընդհանրացման և համակարգման դաս:
- Համակցված դաս:
- Գիտելիքների, կարողությունների և հմտությունների շտկման և վերահսկման դաս[4]:

Նոր ուսումնական նյութի յուրացման դաս: Դասի գլխավոր նպատակը սովորողների կողմից նոր նյութի յուրացումն է, որին տրամադրվում է դասաժամի մեծ մասը: Դասի ընթացքում կարող են գործածվել այնպիսի եղանակներ, ինչպիսիք են դասախոսությունները, բացատրությունները, առանձին հարցերի շուրջ զրույցները: Ուսուցիչը նախքան նյութի հաղորդումը պետք է ակտիվացնի սովորողների

[4] Դասի կառուցվածքային տարրերի կիրառումը հանրակրթական առարկաների օրվա պլանների կազմման գործընթացում,Եր., 2014, https://innostud.am/application/library/5ced296a.pdf, էջ4:

ուշադրությունը, մտավոր գործունեությունը, կազմակերպ իու համակարգի ստացվող գիտելիքները:

Դասի կառուցվածքը՝

- Կազմակերպչական հատված՝ նախապատրաստական աշխատանքներ նոր նյութի յուրացման նպատակով, մասնավորապես՝արդեն ունեցած այն գիտելիքների վերհիշումը, որոնք կապված են հաղորդվող նյութի հետ
- Դասի նպատակի և խնդիրների սահմանում
- Նոր նյութը ուսումնասիրելու համար դրդապատճառների ստեղծում
- Նոր նյութի հաղորդում
- Նոր նյութի յուրացում և ամրապնդում
- Աշխատանքների ամփոփում
- Տնային աշխատանքների հանձնարարում[5]:

Գիտելիքների, կարողությունների և հմտությունների կատարելագործման դաս (յուրացված նյութի նպատակային կիրառություն): Տվյալ դասերի հիմնական ձևերն են՝գործնական, ինքնուրույն, լաբորատոր աշխատանքները և դաս-սեմինարները:

Դասի կառուցվածքը՝

- Կազմակերպչական հատված
- Դասի նպատակի և խնդիրների սահմանում
- Բարդության տարբեր աստիճան ունեցող, տարատեսակ առաջադրանքների հանձնարարում՝ նյութը ուսուցանելու նպատակով
- Աշխատանքների ամփոփում
- Թույլ տրված սխալների շտկում
- Տնային աշխատանքների հանձնարարում:

Ընդհանրացման և համակարգման դաս:

Դասի կառուցվածքը՝

- Կազմակերպչական հատված
- Դասի նպատակների ու խնդիրների սահմանում

5Ուսուցմանարդյունավետհնարներ, https://arm.teachforarmenia.org/, էջ 12:

- Ուսումնական նյութի ուղղակի կրկնություն, որի համար գործածվում է հարցման բանավոր, ֆրոնտալ, հարցազրույցի, քննարկման և գրավոր ձևերը
- Տարված աշխատանքների արդյունքների ամփոփում

Այս դասի անցկացման մասին երեխաները գիտեն նախապես: Կրկնության համար նրանց տրվում են հարցեր և այլ հանձնարարություններ: Դասի հիմնական ձևը դաս-սեմինարներն են:

Համակցված դաս: Համակցված դասերը թույլ են տալիս մեկ դասաժամի ընթացքում լուծել միաժամանակ մի քանի դիդակտիկական խնդիրներ, մասնավորապես՝գիտելիքների ստուգում, նոր նյութի հաղորդում, ուսուցվող նյութի շուրջ որոշակի աշխատանքների կազմակերպում և այլն:

Դասի կառուցվածքը

- Կազմակերպչական հատված
- ուսուցողական-կրկնողական աշխատանքներ անցած նյութի վերաբերյալ
- նոր նյութի հաղորդում
- նոր նյութի իմաստավորման և յուրացման շուրջ տարվող աշխատանքներ
- ուսուցվող նյութի բովանդակության ամրապնդման շուրջ կազմակերպվող աշխատանքներ
- տնային աշխատանքների հանձնարարումը

Գիտելիքների, կարողությունների և հմտությունների շտկման և վերահսկման դաս:

Դասի կառուցվածքը ՝

- կազմակերպչական հատված. սովորողներին հոգեբանորեն տրամադրել տվյալ աշխատանքին՝ նպաստելով նրանց ուշադրության կենտրոնացմանը, հոգեբանական հանգստությանը, վստահությանը և պատրաստվածությանը
- դասի նպատակի և խնդիրների սահմանում. բացահայտում է դասի նպատակը, ստուգման կարևորությունը և բացատրում՝ ստուգման ընթացքում ինչի վրա է հատկապես ուշադրություն դարձվելու
- հիմնական հատված. իրականացվում է ստուգման աշխատանքները
- եզրափակիչ հատված. կատարված աշխատանքների արդյունքների ամփոփում

- վերջին փուլում առանձնացվում, տեսակավորվում են աշխատանքները և դրանցում թույլ տրված սխալները, որոշվում են վերջիններիս պատճառները և կազմակերպվում աշխատանքներ դրանց շտկման ուղղությամբ[6]:

Այժմ ներկայացնենք արդյունավետ դասի փուլերն առանձին-առանձին:

1.Կազմակերպչական

Դրական արդյունքների հասնելու պայմաններ: Ուսուցչի պահանջկոտություն, համբերատարություն, կարգապահություն, պահանջների առաջադրման հետևողականություն, կազմակերպչական ազդեցության համակարգվածություն:

2. Տնային առաջադրանքիբազմակողմանիստուգում

*Դրականարդյունքներիհասնելուպայմաններ:*Ուսուցչիարդյունավետությունը, նրագործունեությաննպատակաուղղվածությունը, դասարանիհնարավորինսբոլորաշակերտներիտնայինաշխատանքներնստուգելուհամակարգվածհնարքներիկիրառում:

.

1.3 Արդյունավետ հնարներ դասի խթանման, իմաստի ընկալման և կշռադատման փուլերի համար

Արդյունավետ դասն ավանդաբար ունի 3 փուլ՝

- դասի սկիզբ,
- նոր նյութի բացատրություն,
- սովորածը պարզելու հնարներ[7]:

Դասի սկիզբ-Յուրաքանչյուր հաղորդակցության մեջ կարևոր է սկիզբը: Մարդկանց մոտ սովորաբար տպավորվում է հաղորդակցության սկզբի և վերջի հատվածները:

Հաղորդակցման առաջին րոպեներին է մարդը որոշում դիմացինին լսել, թե ոչ:Այդ առումով դասի հաջող սկիզբը շատ կարևոր է:Եթե ուսուցչին հաջողվի դասի

[6]Ուսուցմանարդյունավետհնարներ, https://arm.teachforarmenia.org/, էջ 13-14:

[7]Ուսուցմանարդյունավետհնարներ, https://library.fes.de/pdf-files/bueros/georgien/16023.pdf :

առաջին րոպեներին գրավել աշակերտների ուշադրությունը, ապա դա էապես կնպաստի դասի արդյունավետ ընթացքին։

Ներկայացնենք դասը սկսելու մի քանի հնարներ։

1. **Խորհրդավորություն**

Երեխաները սիրում են գաղտնիքներ։ Գաղտնիքների առկայությունը մոտիվացնում է նրանց։Երեխաները ցանկանում են րոպե առաջ բացահայտել գաղտնիքը։

2. **Գուշակություն**

Սովորողների հետաքրքրությունը խթանելու նպատակով կարելի է նյութի հիմնական կարևոր հասկացությունները կամ վերնագիրը թերթիկների վրա գրել, կտրատել առանձին բառերի և պահել դասասենյակում՝ աչքից հեռու տեղերում։ Դասը սկսելուց առաջ առաջարկել սովորողներին գտնել դրանք և համադրելով ստանալ վերնագիրը կամ գլխավոր միտքը։

Ուսուցիչն առաջարկում է թղթի վրա գրել ամենասիրած ֆիլմի կամ հեքիաթի անունը և մտապահել։ Այնուհետև ուսուցիչը թղթերը հավաքում է և խառը բաժանում աշակերտներին։Աշակերտները փորձում են գուշակել, թե ով է գրածի հեղինակը[8]։

3. **Գիտեմ, ուզում եմ իմանալ, սովորեցի (ԳՈՒՍ)**

Դասը սկսելու շատ հայտնի հնար է նաև ԳՈՒՍ-ը։ Դասասկզբում ուսուցիչը գծում է Մ-աձև աղյուսակ, որի ձախ սյունակում գրում է՝ գիտեմ, կենտրոնում՝ ուզում եմ իմանալ, աջ սյունակում՝սովորեցի բառերը։

[9]

4. **Մտագրոհ**

Նոր նյութի բացատրության ժամանակ պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ աշակերտը միանգամից չի կարող շատ բան սովորել։

Հետևաբար՝ նոր նյութը բացատրելիս ուսուցիչը պետք է ուշադիր լինի, որպեսզի չգերազանցի այդ ծավալը։

---

[8]ԱլեքսանյանԼ., ԹորոսյանՆ. նուրիշներ, Կյանքիհմտություններ, Ձեռնարկներուսուցիչներիհամար։ 1-5-րդդասարաններ, Եր.,2001,էջ 58։

[9]ԽաչատրյանՍ., Ուսուցմանարդյունավետհնարներ,Եր., 2020, էջ 13-21։

5-7 րոպե նյութը ներկայացնելուց հետո անհրաժեշտ է կանգ առնել, հարցերի միջոցով պարզել՝արդյո՞ք հասկանում են երեխաները նոր ներկայացված նյութը։Ապա ևս 5-7 րոպե ծախսել նոր նյութի մատուցման վրա[10]։

Շատ կարևոր է նախադասությունների չափը։

Նոր նյութի մատուցման փուլում շատ կարևոր է նաև արդեն իմացածի հետ կապակցումը։Մարդը սովորում է այն դեպքում, երբ կարողանում է նոր գիտելիքը կապակցել արդեն իմացածի հետ։ Հետևաբար՝ նոր նյութը պետք է անընդհատ կապակցել նախկինում ուսումնասիրված նյութի հետ[11]։

Սովորածը պարզելու հնարներ

1. Մտքերի հոսք

Նոր նյութը բացատրելուց հետո ուսուցիչը դադար է վերցնում և աշակերտներին առաջարկում գրել, թե ինչ հասկացան նոր նյութից։ Այնուհետև ուսուցիչը կարող է շարունակել նյութը բացատրել կամ կարող է առաջարկել զույգերով աշխատել։

2.Երկու բան

3. Կիսատ նախադասություն

[10]ԱլեքսանյանԼ., ԹորոսյանՆ. նուրիշներ, Կյանքիհմտություններ, Ձեռնարկներուսուցիչներիհամար: 1-5-րդդասարաններ, Եր.,2001,էջ 82:

[11]ԽաչատրյանՍ., Ուսուցմանարդյունավետհնարներ,Եր., 2020, էջ 13-21:

Իր ընտրությամբ, ուսուցիչը կարող է տա այս նախադասություններից մի քանիսը կամ բոլորը՝ աշակերտներին հնարավորություն ընձեռելով իրենց ցանկությամբ ընտրել այն կիսատ նախադասությունները, որոնք կուզենան ավարտել[12]:

ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԴԱՍԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ

2.1. Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումն իբրև արդյունավետ դասերի պլանավորման միջոց

Կրտսեր դպրոցը կրթության այն հիմնաքարն է, որի որակից է կախված երեխայի հետագա ուսուցումը: Պետք է սովորեցնել երեխային աշխատել տեղեկատվության հետ, սովորեցնել սովորել:

21-րդ դարը համակարգչային տեխնոլոգիաների դար է: Տարրական դպրոցում անհնար է դասավանդել առանց հասանելի և մատչելի տեսանյութերի: Հետևաբար ուսուցիչը պետք է տիրապետի ժամանակակից կրթական հմտություններին, այսինքն՝ լինի մեդիագրագետ:

Այսօր ՏՀՏ – ների լայնածավալ կիրառումը իր տեղն է գտնում առաջին հերթին արդյունավետ դասի կազմակերպման ժամանակ: Այստեղից էլ բխում են ՏՀՏ-ների օգտագործման նպատակները.

Իհարկե, աշխատելով կրտսեր դպրոցականների հետ, անհրաժեշտ է հիշել պատվիրանը՝ «Մի վնասիր»:

ՏՀՏ-ների օգտագործմամբ ուղեկցվող դասերը իրենց պարզության, գեղեցկության և տեսանելիության շնորհիվ ուսումնական նյութի ընկալման ընթացքում առավել մեծ տպավորություն են թողնում սովորողների հոգեբանա-հուզական ֆոնի վրա:

Նաև մեթոդը հնարավորություն է տալիս ուսուցումը դարձնել մատչելի և հասանելի ուսուցման գործընթացի բոլոր մասնակիցների համար:

ՏՀՏ-ն նպաստում է նյութի յուրացման, ամրապնդելու գործընթացը, աշակերտին ներգրավում ուսուցանվող նյութի մեջ:

---

[12]ԽաչատրյանՍ., Ուսուցմանարդյունավետհնարներ,Եր., 2020, էջ 46:

Այսպիսով՝ ՏՀՏ կիրառումը ուսուցման գործընթացում թույլ է տալիս.

- Զարգացնել հետազոտական և ստեղծագործական հմտություններ,
- Խթանել միտքը,
- Ձևավորել տեղեկատվության հետ աշխատելու ունակություն և իրավազեկություն,
- Սովորողին ակտիվորեն ներգրավել ուսումնական գործընթացի մեջ:

Հետազոտություն Սեպտեմբերին ինքնուրույն ընթերցանությանը հատկացված դասաժամին յուրաքանչյուրը ներկայացնում է իր ընթերցած գիրքը գովազդի տեսքով՝ առանց բովանդակությունը պատմելու: Յուրաքանչյուր աշակերտ ձգտում է առավելագույն ձևով ներկայացնել գովազդը, որպեսզի իր ընկերների ընտրությունը կանգ առնի իր նախընտրած գրքի վրա, և բոլորն ընթերցեն այն: Ապա ուղղում ենք հարցեր. Ինչու՞ ես ընտրել այդ գիրքը: Ինչպե՞ս է այն կարդացվում: Դու ծանո՞թ ես այդ հեղինակի որևէ այլ ստեղծագործության: Անծանոթ բառեր կայի՞ն: Ինչպե՞ս իմացար դրանց բացատրությունը:

Այնուհետև քվեարկում ենք և ըստ քվեարկության արդյունքների ընտրում որևէ մեկի ընթերցած գիրքը ու որոշում այն ընթերցել: Միասին սահմանում ենք այն ժամանակահատվածը, որն անհրաժեշտ է աշակերտներին գիրքն ընթերցելու համար: Հաշվի է առնվում տվյալ գիրքն ընթերցած աշակերտի կարծիքը: Նրանք պետք է իմանան ընթերցանությանը հատկացվող ժամանակը, որպեսզի կարողանան պլաններ կազմել: Ընթերցելուց հետո պետք է մասնակցեն քննարկմանը: Նման հանձնարարությունն օգնում է աշակերտներին ընթերցման ժամանակ ուշադրություն դարձնել այնպիսի մանրամասների վրա, որ նախկինում չէին նկատել:

Մինչ կարդալ սկսելը մտագրոհի միջոցով կազմում ենք բնագրի իմաստի կանխավարկածը: Եթե ընթերցողը նախօրոք գիտի, որ ինքը պատմվածք է կարդալու, ապա մինչ բուն ընթերցանությունն սկսելը փորձում է վերնագիրն ու նկարները օգտագործել որպես բանալի՝ պատմվածքի բովանդակությունը կռահելու համար: Այս դեպքում նա կանգնած է հնարավորինս լավ ընկալման շեմին: Տրված ժամանակը

լրանալուց հետո սկսվում է քննարկման դասաժամը: Աշակերտները բաժանվում են 4-5 խմբերի: Նրանց ուղղվում են հարցեր, որոնց պատասխանները քննարկվելու են:

Այնուհետև խմբերն իրենց ընտրությամբ թղթապանակ են պատրաստում տվյալ գրքի վերաբերյալ: Խմբի անդամների միջև կատարում ենք աշխատանքի բաժանում՝ ընտրելով խորագրեր:

- Պատմվածքի քարտեզը
- Հեղինակի մասին
- Պատմվածքի մանրակերտը
- Մեր տպավորությունը
- Գլխավոր հերոսի բնութագիրը
- Նամակ հերոսին
- Հերոսի կողմից նամակ
- Պատմվածքի տարբեր հատվածների նկարազարդումը:

Խոսնակները ներկայացնում են իրենց խմբերի աշխատանքները: Դրանք փակցվում են միջանցքում, որպեսզի մյուս դասարանների աշակերտները հետաքրքրվեն այդ պատմվածքով և ցանկանան ընթերցել այն:

Ինքնուրույն ընթերցանության նման ձևով կազմակերպումը նպաստավոր պայմաններ է ստեղծում, որպեսզի աշակերտների մեջ արթնանա ընթերցանության հանդեպ սեր, նրանք գնահատեն իրենց ընթերցածը, կարողանան ընթերցանության միջոցով ինքնուրույն ձեռք բերել գիտելիքներ և վերահսկեն իրենց ընթերցածը:

2.3.Արդյունավետ դասերի պլանավորման առանձնահատկությունները տարրական դասարաններում

Ուսումնական աշխատանքի ճիշտ կազմակերպման, դրա արդյունավետության ու նպատակայնության համար ուսուցիչը, բացի իր մանկավարժական վարպետությունից և ուսուցման անհրաժեշտ պայմաններից, անպայման ձեռքի տակ պետք է ունենա տվյալ առարկայի պետական ծրագիրը, դասագիրքը կամ դասագրքերը և այդ առարկայի մեթոդիկան:

Արդյունավետ ուսուցման առանձնահատկություններից է այն, որ ուսուցման իրականացման համար ուսուցիչը պետք է հաշվի առնի դիդակտիկայի սկզբունքները:

1. Հաղորդվելիք նյութը պիտի գիտության մեջ հաստատված, սահմանված լինի:

2. Դպրոցական առարկայի ծրագիրը պիտի կազմված լինի հետևողականորեն: Չի կարելի անցնել, ասենք, մակբայը առանց գոյականն անցնելու: Ուսուցիչը չպետք է խախտի ծրագրային կարգը:

3. Ուսուցման ընթացքում տեսական նյութը և գործնական աշխատանքը պետք է լինեն փոխադարձ կապի մեջ: Նյութի յուրացումը ստուգվում է գործնական աշխատանքով:

4. Ծրագրային նյութի առանձին բաժիններն ուսուցանվում են միմյանց հետ փոխադարձ կապակցության մեջ: Չի կարելի իրար հետ կապ ունեցող բաժիններն ուսուցանել իրարից կտրված:

5. Որքան էլ ուսուցումը կոլեկտիվ բնույթ ունենա (ուսուցիչը սովորեցնում է ամբողջ դասարանին), այնուամենայնիվ, նա պիտի միշտ նկատի ունենա դասարանի առանձին աշակերտների կարողությունները, ընդունակություններն ու հմտությունները, պատրաստվածության աստիճանը:

Արդյունավետ ուսուցման համար կարևոր է նյութ(եր)ի համաժամանակյա մատուցումը: Ուստի ինտերակտիվ (էլեկտրոնային) գրատախտակները, հնարավոր են դարձնում նյութի համաժամանակյա մատուցումը՝ ապահովելով աշակերտ կամ ուսուցիչ և միջոց երկկողմանի փոխազդեցությունը, որն էլ մեծացնում է ուսանողների ներգրավվածությունը[13]:

Ուստի դասանյութի համաժամանակյա մատուցմամբ հնարավոր է հաղթահարել ինչպես ուսուցիչ-աշակերտ, աշակերտ-աշակերտ և աշակերտ-ուսուցիչ փոխներազդող հարաբերությունների սահմանափակությունները, այնպես և ուսուցիչ դասավանդվող նյութ և աշակերտ-դասավանդվող նյութ սահմանափակումները:

Արդյունավետ ուսուցման մյուս առանձնահատկություններից է ուսումնառության ընթացքում ուսումնառողների մոտիվացիայի ապահովումը: Ներգրավող մոտիվացիա ապահովելու բազմաթիվ գործոնների շարքում կարևոր է նաև դրանց ապահովումը նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ:

---

[13] ՀովհաննիսյանՍ., Ուսումնառության բարելավումը դասի առանցքային հարցադրումների տեսողականացմամբ, http://ysu.am/files/6-1544606218-.pdf, էջ 6 :

2.4.Ուսուցման արդյունավետ մեթոդների ու հնարների կիրառումը տարրական դասարանների դասագործընթացում

Վերջին տարիներին հաճախ են հակադրում ուսուցման ավանդական և ինտերակտիվ մեթոդները, ուսուցչակենտրոն և աշակերտակենտրոն մոտեցումները: Ընդ որում՝ այդ հակադրումը կատարվում է այն համատեքստում, որ ինտերակտիվ և աշակերտակենտրոն մոտեցումները բացարձակապես լավն են, իսկ ավանդական և ուսուցչակենտրոն մոտեցումները՝ վատը: Այս մոտեցումը գիտականորեն հիմնավորված չէ:

Ինտերակտիվ մոտեցումներն անհրաժեշտ են աշակերտներին մոտիվացնելու, ուսուցումը հետաքրքիր ու մասնակցային դարձնելու համար: Բայց այդ ամենը չեն բացառում նաև ավանդական մոտեցումների օգտագործումը: Հարց ու պատասխանը, նյութը վերհիշելը, վարժանքները, ուսուցչի բացատրական խոսքը այսօր էլ կարևոր են ու անհրաժեշտ ուսուցման համար: Բացի այդ՝ ինտերակտիվ ուսուցումն ունի որոշակի ռիսկեր, որոնք անտեսել չի կարելի[14]:

Օրինակ՝ խմբային աշխատանքների ժամանակ որոշ աշակերտներ «գլուխ են պահում»: Արտաքուստ թվում է, թե երեխաներն ակտիվ են, բայց վերջում պարզվում է, որ մնացորդային գիտելիքների մակարդակը ցածր է:

Հետևաբար՝ նոր մանկավարժության մեջ չպետք է լինեն մեթոդների և հնարների հակադրում: Բոլոր մեթոդներն ու հնարները ինչ-որ իրավիճակում կարող են օգտակար լինել:

Ուսուցման հնարներ- Մի դասարանում կիրառվող մոտեցումը մի այլ դասարանում կարող է չաշխատել: Ոստի ուսուցման մեթոդներն ու հնարները պետք է ընկալել որպես գործիքներ, որոնց կիրառումը կատարում է ուսուցիչը:

Շատ ճիշտ և հարմար է արդյունավետ դասի պլանավորման ժամանակ առաջնորդվել ԽԻԿ համակարգով: Ներկայացնենք դասի կազմակերպման մի քանի արդյունավետ մեթոդներ.

1. **Մտաբերում**

[14]ԱյվազյանՀ.,Դասիկառուցվածքայինտարրերիկիրառումըհանրակրթականառարկաներիօրվապլանների կազմմանգործընթացում, Եր., 2014,էջ 26:

Վերջին տարիներին բազմաթիվ մասնագետներ նշում են, որ մտաբերումը ուսուցման առավել արդյունավետ ձևերից է: Ուսուցման գործընթացում մենք հաճախ ավելի կարևորում ենք գիտելիք տալը: Բայց պարզվում է, որ սովորելու չափանիշը իմացածը դուրս բերելն է, որ հայերեն կարող ենք կոչել մտաբերում:

2.Նյութի սփռում ժամանակի մեջ

Շատ ավելի արդյունավետ է քննություններին պատրաստվել ոչ թե վերջին մեկ-երկու օրվա ընթացքում, այլ ավելի տևական ժամանակում: Իսկ կարևոր թեմաները ոչ թե պետք է ուսուցանել մեկ դասի ընթացքում և առաջ անցնել, այլ պետք է դրանց անընդհատ անդրադառնալ[15]:

3.Խառը ուսուցում

Խառը ուսուցումը կապված է ժամանակի մեջ նյութի սփռման հետ: Հետազոտությունները ցույց են տվել, որ ուսուցումն առավել արդյունավետ է, երբ ուսումնական նյութը մատուցվում է խառը: Սա հատկապես տեսանելի է մաթեմատիկայի դեպքում: Պատկերացնենք, օրինակ, խնդիրների հետևյալ երկու շարքերը.

Պարզվում է, որ խառը ուսուցման դեպքում արդյունքներն ավելի լավ են լինում: Այսինքն՝ ակնհայտ է, որ խառը ուսուցման դեպքում աշակերտների գիտելիքներն ավելի մնայուն են: Ուսուցման ընթացքում կարևոր է հասկանալ, որ ոչ բոլոր թեմաները կարող են ուսուցանվել խառը մոտեցմամբ:

4. Օրինակներով ուսուցում

[15]ԽաչատրյանՍ., Ուսուցմանարդյունավետհնարներ,Եր.,Հայաստան, 2020, էջ 13-21:

Ուսուցման գործընթացում ուսուցիչները հաճախ են օրինակներ օգտագործում, սակայն դրանց հետ կապված կարևոր է իմանալ երկու բան: Առաջին՝ հաճախ ուսուցիչները բավարարվում են մեկ օրինակ բերելով:

Մինչդեռ եթե ուսուցիչը մեկի փոխարեն երկու կամ երեք օրինակ բերի, ապա յուրը հասկացող աշակերտների թիվը էապես կավելանա:

Երկրորդ՝ շատ կարևոր է, որ աշակերտներին առաջադրանքներ տալիս տրվեն այնպիսի օրինակներ, որոնցում հարցի պատասխանի մի մասը կա կամ ներառված են խնդրի լուծման որոշ քայլեր: Սա աշակերտներին քայլ առ քայլ սովորելու հնարավորություն է տալիս:

5. Պատկերի և տեքստի համադրում

Մենք ապրում ենք մի ժամանակում, երբ պատկերներ ստեղծելու հնարավորությունները մեծացել են: Արդյունքում մարդիկ ավելի լավ են յուրացնում այն ամենը, ինչը ուղեկցվում է պատկերներով: Դրանք կարող են լինել նկարներ, լուսանկարներ, գծագրեր, գծապատկերներ, ինֆոգրաֆիկաներ:Հետևաբար՝

6. Մետաիմացություն

Ուսուցման գործընթացում շատ մեծ դեր ունի այն հանգամանքը, թե որքանով են աշակերտները տեղյակ իրենց իմացածից ու չիմացածից: Այս երևույթը կոչվում է մետաիմացություն: Այս դեպքում աշակերտը կարողանում է իրեն կողքից նայել և հասկանալ իր իմացածն ու չիմացածը: Ահա այն 3 հարցերը, որը պետք է տա յուրաքանչյուր սովորող[16]:

[16]ԽաչատրյանՍ., Ուսուցմանարդյունավետհնարներ,Եր.,Հայաստան, 2020, էջ 13-21:

Ներկայացնեմ իմ իրականացրած դասի պլանի օրինակներից:

Դասի պլան

Առարկա-Մայրենի

Դասարան-3-րդ

Թեմա-հին դաս՝ «Անտառի բնակիչները»

Նոր դաս՝ Արջի և վարազի կռիվը: Բառ (կրկնություն)

Դասի տիպը- Նոր նյութի հաղորդման դաս:

Նպատակը-

1. **Գիտելիքների համակարգ**

- Կընթերցեն բնագիրը՝ զարգացնելով երկարաշունչ նախադասությունների՝ սահուն և հասկանալով կարդալու կարողությունները,
- Կկարողանան պատմվածքում շարադրված դեպքերի մեջ տեսնել պատճառահետևանքային կապեր՝ գուշակելով դրանց հետագա ընթացքը,
- Հարց ու պատասխանի միջոցով կվերլուծեն բնագիրը՝ կարևորելով ստեղծագործության մեջ տեղի ունեցող դեպքերը:

2. **Կարողությունների համակարգ**

- Կկարողանան որոշել ստեղծագործության հերոսների արարքները և դրանց դրդապատճառները,
- Կվերադասավորեն խառնված նկարների հերթականությունը, կսովորեն կազմել բնագրի պլան,
- Կվերարտադրեն բնագիրը որպես ականատես,
- կքննարկեն _Ինչո՞վ է զարմանալի այս պատմությունը:|

3. **Արժեքային համակարգ**

- Ընդլայնել ճանաչողական հետաքրքրությունները
- Դաստիարակել սեր դեպի հայրենի բնությունը, կենդանական աշխարհը

4. **Լեզվատրամաբանական աշխատանք**

- Կկարողանան տրված բառերը համապատասխանաբար տեղադրել նախադասության մեջ՝ խորացնելով բառի իմաստային գործածության մասին ունեցած գիտելիքները:

Դասի տիպը՝ համակցված:

Դասի ընթացքում կիրառվող մեթոդներ՝ մտքերի տարափ, զրույց, հարց ու պատասխան, աքրոստիքոսի, հանելուկի հորինում:

Դասի ընթացքը՝ ԽԻԿ համակարգով:

Խթանման փուլ՝ 10-12 րոպե

Տնային աշխատանքների ստուգում

Դերային խաղով ներկայացնել բանաստեղծությունը (ա մակարդակ, դերերի ընտրությունը կատարել երեխաների նախաձեռնությամբ)

Բնութագրել բնագրի հերոսներին, արարքները (գ. մակարդակի աշակերտներ)

Նշել նմանություններն ու տարբերությունները՝ յուրովի նախապատրաստումը ձմռանը (բ. բակարդակի աշակերտներ)

Հորինել աքրոստիկոս կամ հանելուկ **արջուկ** բառով (գ. մակարդակի աշակերտներ)

Ֆիզդաղար

Իմաստի ընկալում՝ 30 րոպե

Զրույց՝ Վ. Անանյանը սիրել է որսորդական և հետաքրքրաշարժ պատմություններ և գրի է առել: Կկարդանք «Արջի ու վարազի կռիվը» զարմանալի դեպքը, որի ականատեսը եղել է նրա որսորդական ընկերներից մեկը: Վ. Անանյանի հղումը՝ **Ես հասկանում եմ քեզ, լսում եմ սրտիդ զարկերը, ի՛մ լավ, ի՛մ զգայուն բարեկամ...**

- Կարդալ պատմությունը պարբերություն առ պարբերություն:
- Մեկնաբանել գաղափարական բովանդակությունը:
- Անծանոթ բառերի բացատրություն՝*թավուտ, վիստալ, փորսող տալ, ելարան խուճապ, ահաբեկված, արջ, առաջ, նայել, երևա, հետևում, սայթաքել, մռթմռթալ, պատառոտել* բառերը գրել բառատետրում:

- Դիտել կից նկարները և համեմատել բնագրի մասերի բովանդակության հետ:
- Նոր դասը կկարդան լավ սովորող աշակերտները:
- Կատարել առաջադրանք 1 (բ. Մակարդակի աշակերտներ):
- Դիտել նկարները, պատմել և որոշել ճիշտ հերթականությունը (գ. մակարդակի աշակերտներ):
- Բնագրում կգտնեն յուրաքանչյուր նկարին համապատասխանող հատվածը և կվերնագրեն:

Կկազմեն պլան՝

1. Որսորդն անտառում:
2. Արջի ելարանը:
3. Վարազն ու ձագերը:
4. Արջի ու վարազի կռիվը:

Կշռադատում՝ 3 բոպե

բ. Մակարդակի համար.

Ի՞նչ էր անում որսորդը:

Ինչո՞ւ չկրակեց:

Արջն ինչո՞ւ էր ելարան պատրաստել:

Ինչո՞ւ արջի վրա մոլեգնած հարձակվեց վարազը:

գ. մակարդակի համար.

Հայտնի՛ր քո կարծիքը, ընտրի՛ր ճիշտ տարբերակը.

Արջը (վարազը) ճիշտ վարվեց, որովհետև….

Արջը (վարազը) սխալ վարվեց, որովհետև….

Ինչո՞վ էր զարմանալի այս պատմությունը:

Ի՞նչն է հուզական երանգ հաղորդում պատմվածքին:

Անել մեկնաբանություններ և գրել «Հրաշք» տետրում:

«Ծնողի սիրտը նուրբ է ու փխրուն, բնության մեջ ոչ մի բան իր զգացմունքայնությամբ չի կարող փոխարինել նրան»:

«Վարազի հայրն էլ հայր է, սիրտն էլ սիրտ է, ինչպես մերը»:

Լրացնել խաչբառը: Կարդալ թաքնված ընդգծված բառը և նկարագրել (անտառ):



1. Հաղթող կենդանին
2. Արագավազ կենդանի, շլդիկ:
3. Վայրի աղավնի (արտույտ):
4. Պատմվածքի մոթմոթան կենդանին:
5. Կենդանիների արքան:

Հասկացանք, որ կենդանիներին էլ են հատուկ այն հույզերը, որոնք ունեն մարդիկ:

Գնահատում

Տնային աշխատանքի հանձնարարում.

Վարժ. 2 (գ. մակարդակի համար),

Վարժ. 3 (բ. մակարդակի համար)

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հետազոտական աշխատանքի թեմայի ուսումնասիրությունից եկա հետևյալ եզրակացության՝

- Դասը դպրոցում ուսումնական աշխատանքի կազմակերպմանձև է, երբ պարապմունքները տարվում են սովորողների կայուն կազմի՝դասարանի հետ, կայուն դասացուցակով՝ օգտագործելով սովորողների կոլեկտիվ ու անհատական աշխատանքը՝ կիրառելով ուսուցման տարբեր մեթոդներ:
- Արդյունվետ դասի պլանավորման մեջ որպես ամենակարևոր հարց, որ պետք է ուսուցիչը դնի դասի պլանավորման հիմքում, կառանձնացնեմ արժեհամակարգի ձևավորման խնդիրը: Յուրաքանչյուր ուսուցիչ իր դասի վերջում պետք է հասնի նրան, որ աշակերտի մոտ հարց չմնա՝ «Ինչի համար և որտեղ է պետք սա ինձ»:
- Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը դասը դարձնում է հետաքրքիր, արդյունավետ ու հեշտ ուսանելի, աշակերտները ակտիվ ներգրավված են ողջ դասապրոցեսին, նրանք են փնտրում ու գտնում իրենց անհրաժեշտ ինֆորմացիան, ինչն էլ հանդիսանում է մնայուն գիտելիքի հիմքը:
- Ուսումնական միջոցների և հնարների միջոցով դասը դառնում է դյուրընկալելի և պահանջված, իսկ դասընթացը՝ սովորողների համար հասկանալի և հաճելի:
- Ամեն ուսուցիչ ունի իր մեթոդը դասին նախապատրաստվելու համար,իսկ դասի ճիշտ պլանավորումը հանգեցնում է արդյունավետ դաս վարելուն, ինչն էլ տալիս է լավ արդյունք:

Օգտագործած գրականություն

•Ալեքսանյան Լ., Թորոսյան Ն. և ուրիշներ, Կյանքի հմտություններ, Ձեռնարկներ ուսուցիչների համար: 1-5-րդ դասարաններ: Եր., «Մակմիլան-Արմենիա», 2001, 117 էջ:

- Ալխուտովա Ա., Օրեշկինա Ի., Տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործումը կրտսեր դպրոցում,https://ashxengrigoryan.wordpress.com:
- Այվազյան Հ.,Դասի կառուցվածքային տարրերի կիրառումը հանրակրթական առարկաների օրվա պլանների կազմման գործընթացում, Եր., «Դպրոց կենտրոնների միություն», 2014, 48 էջ:
- ԽաչատրյանՍ., Ուսուցման արդյունավետ հնարներ,Եր.,«Հայաստան», 2020, 76 էջ:
- ԽաչատրյանՍ., Ուսուցման ժամանակակից մեթոդների կիրառումը, Գյումրի, «Էդիթ Պրինտ», 2006, 92 էջ:
- Կրթության, գիտության նախարարություն, Տեղեկագիր, Եր., 2011:
- ՀարությունյանԳ., Քննադատական մտածողության տեխնոլոգիայի կիրառման հնարավորությունները կրտսեր դպրոցում», «Մանկավարժական կրթություն, Հայացք դեպի ապագա» միջազգային գիտաժողովի նյութեր, «Մանկավարժ», Եր., 2007, 260 էջ:
- Հովհաննիսյան Ս.,Ուսումնառության բարելավումը դասի առանցքային հարցադրումների տեսողականացմամբ, http://ysu.am/files/6-1544606218-.pdf :
- Նազարյան Լ., Դասիտեսակները, կառուցվածքն ու մեթոդիկան դպրոցում, Եր.,«Լույս», 1979, 264 էջ.
- ՍոխոմլինսկիՎ.,Սիրտս նվիրում եմ երեխներին,Եր., «Լույս», 1977, 359 էջ:
- Տարրական դպրոցի, առարկայի չափորոշիչներ և ծրագրեր, Եր.,«Աստղիկ» գրատուն, 2006, 56էջ:
- Տեր-Գրիգորյան Ա., Հայոց լեզվի մեթոդիկա, Եր., «ԵՊՀ» հրատ.,1980, 263 էջ:
- Քննադատական մտածողության տեսության զարգացումը կրտսեր դպրոցում, Ծրագրեր և նյութեր, Եր. «Աստղիկ»գրատուն, 2002, 140 էջ:

• Ալեքսանյան Լ., Թորոսյան Ն. և ուրիշներ, Կյանքի հմտություններ, Ձեռնարկներ ուսուցիչների համար: 1-5-րդ դասարաններ: Եր., «Մակմիլան-Արմենիա», 2001, 117 էջ:

ՀԱՄԱՑԱՆՑ

- https://ahaslides.com/hy/blog/15-innovative-teaching-methods/?limit=all, Ուսուցման 15 նորարարական մեթոդ ուղեցույցով և օրինակներով:
- https://arm.teachforarmenia.org/, Ուսուցման արդյունավետ հնարներ:
- https://innostud.am/application/library/5ced296a.pdf, Դասի կառուցվածքային տարրերի կիրառումը հանրակրթական առարկաների օրվա պլանների կազզման գործընթացում:
- https://library.fes.de/pdf-files/bueros/georgien/16023.pdf, Ուսուցման արդյունավետ հնարներ:
- https://krtsernordproc.wordpress.com/2014/01/30/, ՏՀՏ կիրառումը տարրական դպրոցում: